34-ՐԴ ՆԻՍՏ

8 նոյեմբերի 1918թ.

Նիստը բացվում է եր. ժ. 7-ին, նախագահում է *Ա. Սահակյանը.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, արտաքին գործ[ոց], ներքին գործ[ոց], իրավարարության և զինվորական մինիստրները: Նախագահը կարդում է օրակարգը.

1. Կառավարության պատասխանը դաշն. ֆրակցիայի հարցումին (հայկական գնացքի մասին).
2. Անդրկովկասյան կոնֆերանսի խնդիրը.
3. Արտաքին գործերի պառլամենտական հանձնաժողովի ընտրությունը.
4. Օրինագիծ Հայաստանի Խորհրդարանի նախահաշվի մասին (Բ ընթերցում).

5. Պառլամենտական հանձնաժողովների լրացումների խնդիրը.
6. Օրինագիծ կորպուսի դատարանով մեղադրվածների պատիժը թեթևացնելու մասին (Ա ընթերցում).
7. Օրինագիծ Ադրբեջանի կառավարության մոտ Հայաստանի դիվանագիտական միսիա հիմնադրելու մասին (Ա ընթերցում).
8. Օրինագիծ բամբակի գնման և վաճառման մասին (Ա ընթերցում).
9. Օրինագիծ Պարսկաստանում գտնվող գաղթականների օգնության մասին (Ա ընթերցում).
10. Օրինագիծ երկաթուղու կայարանի ծառայողների համար կոոպերատիվ խանութ բանալու մասին (Ա ընթերցում).
11. Օրինագիծ Քաղ[աքային] միության ծառայողների լիկվիդացիայի մասին (Ա ընթերցում).
12. Զինվորական ծառայության մեջ գտնված նախկին քաղաքացիական ծառայողների դիմումը՝ նպաստն իրենց վրա ևս տարածելու մասին.
13. Ընթացիկ գործեր:

Մին[իստր]-նախագահ - Դաշնակց[ական] ֆրակցիայի գնացքին վերաբերյալ հարցումին այսօր ես չպիտի կարողանամ պատասխանել, որովհետև որոշ տվյալներ պակասում են: Դիմել ենք Թիֆլիս, եթե պատասխան ստանանք, մյուս նիստին կհայտարարենք:

Քննվում է վրացական կառավարության հրավերը՝ Թիֆլիսի կոնֆերենցիային մասնակցելու:

Հ. Ազատյան - Կառավարությունը որևէ որոշում ունի՞ այդ խնդրի առթիվ:

Արտ. գործ. մինիստր - Անցյալ անգամին հայտնեցի, որ դա այն կարգի խնդիրներից է, որ մինիստրությունը առանց խորհրդարանի որոշման ոչինչ չի արել: Կառավարությունը ոչ մի որոշում չունի:

Ա. Մալխասյան – Սոց.-դեմոկրատական ֆրակցիան սկզբունքով կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում, սակայն այն ձևով, ինչպես որ հրավիրում է վրացական կառավարությունը, չենք կարող ընդունել: Նա՝ անկախ իրեն հավասար մյուս պետություններից, որոշել է տեղը, ժամանակը և ամենագլխավորը՝ օրակարգը կոնֆերենցիայի: Այդ պարագաներում եթե մասնակցենք մենք, չեմ տարակուսում, որ մյուս պետությանց ներկայացուցիչները համաձայնության կգան և մեզ վնասող որոշումներ կտան: Մերժելով այդ հրավերը, պիտի աշխատել կանոնավոր և օրինական ձևով մի կոնֆերենցիա կազմել՝ հայ-վրացական մի ընդհանուր գիծ մշակելու համար:

Ս. Թորոսյան - Ողջունում եմ սոց. դեմ[ոկրատների] ֆրակցիայի խոսքը և բռնած նոր ուղին, որ ավելի կզարգանա, եթե հայկական հողի վրա կանգնեն հայ սոց. դեմոկրատները:

Վրացական կառավարության առաջարկը չենք կարող ընդունել, չնայած սկզբունքով դեմ չենք կոնֆերենցիային: Մենք քանիցս աշխատել ենք անդրկովկասյան բոլոր ազգերին ի մի հավաքելու, սակայն փորձերն անցել են անհաջող. գուցե և ապագայում գլուխ կգա: Մենք չենք կարող համաձայնել ընդունելու կոնֆերենցիայի հրավերը այն պատճառով, ինչ որ որոշակի հայտնեց սոց. դեմ. ֆրակցիայի ներկայացուցիչը: Հանձնարարենք մեր կառավարության, որ բանակցություններ սկսի վրաց կառավարության հետ և հասկացնի նրան, որ որոշ կարգով ու փոխադարձ համաձայնությամբ տեղը, ժամանակը և օրակարգը որոշելով, կազմվի հայ-վրացական կոնֆերենցիա: Պետք է որոշ խնդիրներ լուծված լինեն նախքան կոնֆերենցիան, օր.՝ սահմանորոշման խնդիրը: Մենք մեր երկրի սահմանները գիտնալուց հետո պիտի գնանք այնպիսի մի կոնֆերենցիա, ինչպիսին որոշել է վրաց կառավարությունը, քանի որ մեր իրավունքներն ավելի կոտնահարվին մյուսների միացմամբ, ինչպես այդ տեսանք գյուղացիական համագումարին և այլ մի շարք դեպքերում: Այդ հավելումն ենք անում սոց. դեմոկրատ[ների] ֆրակցիայի համակարգին և առաջարկում մեր բանաձևը:

Ս. Մամիկոնյան - Այստեղ հրավերի ձևին ուշք դարձրին, սակայն եթե վրաց կառավարության առաջարկությունը մեզ ձեռնտու լիներ, ուշք չէինք դարձնի ձևին

և արտակարգ գնացքով մեզ կծգեինք Թիֆլիս: Խնդրին պիտի նայել օգուտի, շահի տեսակետից. այդ կերպ վերաբերվելով, ես ասում եմ, որ ոչ, մենք չենք օգտվի այդ կոնֆերենցիայից: Եթե այդպես է, ապա ուրեմն և չենք կարող մասնակցել: Վրաստանին պատասխանել, որ մենք պատրաստ ենք քեզ հետ մեր վեճերը, իսկույն ևեթ համաձայնության գալով, բարի ու դրացիական հարաբերությամբ լուծելու: Մեր արյունոտ անցյալը թող թելադրի մեզ կանգնել հայկական հողի վրա և իբրև հայ պաշտպանել մեր երկրի շահերը:

Ա. Խոնդկարյան - Էսէռական ֆրակցիան անհրաժեշտ է գտնում շեշտել դիմումի այն ձևը, որ վրաց կառավարությունն արել է հայկական կառավարության. նա շատ լավ իմացել է, որ հայկական կառավարության պատասխանը բացասական կլինի, միայն այդպես արել է դիտմամբ, որ հետո այս կամ այն դեպքում հայտարարի, թե հայ ժողովուրդը, հայ դեմոկրատիան մեկուսացել է: Նա՝ վրաց կառավարությունը, վախենում է դաշնակիցների գալուստից, աշխատում են մի կերպ գոնե թեթևակի համաձայնություն լինի կովկասյան պետությունների միջև, որ սրանցից մեկն ու մեկը եկող նոր տերերին չասի, թե չեմ ուզում անկախություն, եթե, օր[ինակ], հայկական պետությունը ընդունի որևէ մեկի իշխանությունը, այն դեպքում մյուսների դիրքն ըստինքյան խախտվի պիտի: Համաձայնությունը կովկասյան պետությունների մեջ անիմաստ բան է և չի կարող գլուխ գալ: Համաձայնություն այդ երկրի ժողովուրդների մեջ պիտի առաջ գա. ժողովուրդն այլ հասկացողություն է, պետությունը՝ այլ: Այդ կոնֆերենցիան, ըստ ամենայնի, ձեռնտու չէ մեզ: Պիտի լինի հայ-վրացական կոնֆերենցիա՝ սահմանների վերաբերյալ վեճը վերջացնելու: Վաղը կարող է հարկը պահանջել մասնակի կոնֆերենցիա և Ադրբեջանի հետ, կհամաձայնենք և դրան: Մեր հանրապետությունը պիտի դեմ լինի վրացական կառավարության հրավիրելիք կոնֆերենցիային, մինչև որ կգա այս երկրի իսկական տերը և, միացնելով բոլոր դեմոկրատիաներն իրար, կլուծի ամեն մի տարաձայնություն:

Եր. Հարությունյան - Ժողով[րդական] կուսակցության ֆրակց[իան] համաձայն է էսդեկների և դաշնակցականների առաջարկներին, սակայն ընդհանուր համաձայնություն կայանալու համար առաջարկում ենք հայտարարել ընդմիջում:

Հայտարարվեց կես ժամ ընդմիջում:

Նիստը վերսկսվում է. նախորդ խնդրի վերաբերմամբ առաջարկվում են բանաձևեր. ընդունվում է դաշնակց[ական] ֆրակցիայի բանաձևը, որը հետևյալն է.

«Հայաստանի Խորհրդարանը, ծանոթանալով 1918թ. նոյեմբերի 10-ին վրաց կառավարության նախաձեռնությամբ Թիֆլիսում գումարվելիք Անդրկովկասյան կոնֆերանսի մասին եղած դոկումենտներին և լսելով այդ հարցի շուրջը ծագած վիճաբանությունները, սկզբունքով համաձայնում է Անդրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչների կոնֆերանս գումարելու առաջարկության, սակայն գտնում է, որ այն նոյեմբերի 10-ին գումարվել չի կարող նախ այն պատճառով, որ Վրաստանի կառավարությունը այդ խնդրի նախապատրաստական աշխատանքները հարևան հանրապետություններին վայել եղանակով չի տարել, ապա՝ որովհետև հրավերն ուշ է ստացված, ուստի և Հայաստանի կառավարությանը հրահանգում է հող պատրաստել մասնակցելու կոնֆերանսին՝ նախ-օրոք համաձայնության գալով կոնֆերանսի կազմի, օրակարգի, տեղի և ժամանակի նկատմամբ: Միևնույն ժամանակ Հայաստանի Խորհրդարանը գտնում է, որ Հայաստանի և Վրաստանի սահմանորոշման հարցը առնչություն չպիտի ունենա Անդրկովկասի կոնֆերանսի հետ, այլ պիտի վճռվի միայն երկու հանրապետությանց ներկայացուցիչների միջոցով, փոխադարձ համաձայնությամբ և նախքան Անդրկովկասյան կոնֆերանսի գումարումը»:

Էսէռների բանաձևը.

«Ի նկատի ունենալով, որ Վրաստանի հրավիրած կոնֆերանսի օրակարգից երևում է, որ այդ միջազգային կոնֆերանսը հավաքվում է միայն մի գլխավոր նպատակով՝ ամրացնելու անդրկովկասյան զանազան հանրապետությունների ներքին իրավական և արտաքին միջազգային դրությունը, Հայաստանի Խորհրդարանը հրաժարվում է մասնակցել այդ կոնֆերանսին և միաժամանակ առաջարկում է հայ-վրացական սահմանների խնդիրը լուծել այդ երկու ազգությունների ներկայացուցիչների ժողովում»:

Սոց.դեմոկրատների բանաձևը.

«Լսելով վրաց դեմոկրատական հանրապետության գրությունը հոկտեմբերի 27-ից 1918թ. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի անունով Վրաստանում, որով [Հայաստանին] հրավիրում է նոյեմբ. 10-ին Տփխիսում Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի և Հյուսիսային Կովկասի լեռնցիների դաշնակցության կոնֆերանսի, Հայաստանի Խորհրդարանը գտնում է.

1. Ի նկատի ունենալով, որ համաշխարհային պատերազմը մոտենում է իր վախճանին և որ հաշտության սպասվող վեհաժողովը պետք է որոշի ևս Կովկասի և Անդրկովկասի ազգերի ճակատագիրը, այդ ժողովուրդների միահամուռ առաջ գալու համար վեհաժողովում անհրաժեշտ է, որ նրանք որոշ համաձայնության գային և վաղօրոք հաստատեին իրար մեջ փոխհարաբերություններ:

2. Այդ նպատակով անհրաժեշտ է հրավիրել մի կոնֆերանս, որտեղ պիտի ներկայանան Կովկասի և Անդրկովկասի այն բոլոր պետական նորաստեղծ մարմինները, որոնք բաժանվել են ռուսական կայսրությունից:

3. Կոնֆերանսի կազմը, նրա գումարման ժամանակն ու տեղը, ինչպես նաև այն խնդիրները, որոնք ենթակա են լինելու կոնֆերանսի քննության, պետք է մշակվեն և որոշվեն ոչ միակողմանի եղանակով, այլ միայն մտքերի նախընթաց փոխանակությունից հետո այն ժողովուրդների կառավարությունների մեջ, որոնք մասնակցելու են կոնֆերանսին՝ առանձին միջպետական հանձնաժողովի միջոցով կոնֆերանս հրավիրելու համար:

Այդ պատճառով Հայաստանի Խորհրդարանը որոշում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարության հանձն[արար]ել, որ նա, չմասնակցելով նոյեմբերի 10-ին հրավիրվող կոնֆերանսին, անմիջապես սկսի բանակցություններ վարելու վրաց դեմոկրատական հանրապետության կառավարության հետ՝ միջպետական հանձնաժողով գումարելու կոնֆերանսի հրավիրման համար, հանձնի նրա քննության կոնֆերանսի կազմի, գումարման ժամանակի, տեղի և օրակարգի հարցերը»:

Մ. Հարությունյան - Մեր ֆրակցիան առաջարկում է հանձնարարել նախագահության, որ թերթերում հրապարակվեն հիշյալ խնդրի վերաբերմամբ առաջարկված բոլոր բանաձևերը:

Առաջարկը քվեարկվում և անցնում է:

Քվեարկության է դրվում օրակարգի Գ. կետը:

Մ. Հարությունյան - Սկզբունքով դեմ ենք, բայց իբրև մի կողմնակի միջոցի, համաձայն ենք: Միշտ էլ հնարավոր չի լինի, որ հանձնաժողովի հետ խորհրդակցելով, մինիստրն անե այս կամ այն քայլը, բոլոր դեպքերում էլ չի կարելի պահանջել, որ գործերը գաղտնի չտարվեն: Առաջարկում ենք Ավագների խորհուրդն ընդունել իբրև խորհրդակցող մարմին:

Ա. Խոնդկարյան - Արտաքին քաղաքականության խնդիրները պիտի որոշե խորհրդարանը, սակայն երբ հնարավոր չէ հանկարծակի դեպքերում այդ անել, այն ժամանակ պիտի հավաքվի այդ բանի համար կազմված հանձնաժողովը: Գտնում ենք անհրաժեշտ այդ հանձնաժողովը:

Հ. Ազատյան - Սոց.-դեմ. ֆրակցիայի կարծիքով՝ լինի ընտրված հանձնաժողով, թե՝ ավագների խորհուրդ, այդ միևնույնն է, միայն թե որոշ պիտի լինեն ֆունկցիաներն ու փոխհարաբերությունները և, բացի այդ, լիազորված մարմինը պիտի իր աշխատանքը դնի խորհրդարանի և ոչ թե մինիստրի առաջ:

Մ. Հարությունյան - Ավագների խորհուրդը միայն խորհրդակցական նշանակություն պիտի ունենա և ոչ վճռական, այն էլ շատ կարևոր դեպքերում:

Ս. Մամիկոնյան - Արտաքին գործերը մեր պետության ամենակարևոր կողմն են: Վերին և որոշող մարմինը խորհրդարանն է: Խորհրդակցություն բառն այս խնդրում չեմ հասկանում. խորհրդարանը չի կարող խորհրդակցել կառավարության հետ, այլ միշտ խնդիրները քննում, վճռում է և նոր հանձնում կառավարու-

թյան՝ ի կատարումն: Առաջարկում եմ անպայման կազմել հանձնաժողով և ոչ թե հանձնել Ավագների խորհրդին:

Արտաքին գործոց մինիստր - Արտաքին գործերի վարումը պիտի հանձնվի մինիստրին, նրա պատասխանատվությամբ: Գաղտնապահություն կարող է լինել, բայց այն մտքով, ինչ որ հասկացվում է գաղտնի դիպլոմատիական ձև, այլ հենց իբրև մի տեխնիկական հարմարություն: Ինչ հանձնաժողով էլ որ լինի, նա չպիտի կաշկանդե մինիստրին և դժվար պայմանների մեջ դնե նրան՝ խառնվելով նրա ակտիվ քայլերին:

Հ. Ազատյան - Նոր հանձնաժողով պիտի ընտրվի և ունենա բոլոր այն ֆունկցիաներն, ինչ որ պառլամենտական մյուս բոլոր հանձնաժողովները: Ավագների խորհրդի անդամները խորհրդարանի պատասխանատվությունն իրենց վրա չեն վերցնի: Առաջարկում ենք այսօր որոշել հանձնաժողովի խնդիրը, ընտրել այն, իսկ գաղտնիքի խնդիրը թողնել հետագա ժողովներին:

Գ. Տեր-Խաչատրյան - Ավագների խորհուրդը կառավարության հետ պիտի շաբաթն առնվազն մեկ անգամ ունենա խորհրդակցություն, որպեսզի միշտ տեղյակ լինի անցուդարձին և պատասխանատու զգա իրեն:

Դ. Զուբյան - Առաջարկում է անպատճառ ընտրել պառլամենտական հատուկ հանձնաժողով:

Առաջարկվում են բանաձևեր, անցնում է դաշնակցական ֆրակցիայինը. «Առանձին կարևորություն ունեցող խնդիրների քննության համար արտաքին գործերի մինիստրը խորհրդակցում է Ավագների խորհրդի հետ՝ պարբերաբար նիստ նշանակելով»:

[Ա.] բ[եկ] *Աղաբաբեկով* - Հայտնի՞ է, արդյոք, կառավարությանը, որ Բաշգյառնիի շրջանում հայկական կանոնավոր զորքը ռմբակոծում է թուրքական գյուղեր, եթե այո, ինչու՞:

Մինիստր-նախագահ - Թուրքական երեք գյուղ ռմբակոծված են: Միլլիդարան մեր պետության հիմնադրության օրից սկսած չի ենթարկվել մեր իշխանության, զինաթափ չի եղել, տուրքեր չի տվել և նույնիսկ սպանել է իրենց պարտքը կատարող մեր երեք միլիցիոներներին: Նրանց հարց է տրված՝ ուզու՞մ եք հպատակվել և մնալ, թե՞ գնալ-հեռանալ այդտեղից: Նոքա երկու շաբաթ ժամանակ խնդրեցին, որ տրվեց նրանց, սակայն Մահմեդ Ալի փաշայի միջամտությամբ տրվեց նորից մի ամիս ժամանակ: Ամիսն էլ անցավ, նրանք մնացին և երբ գավառական կոմիսարը գնում է նոցա, իբրև հպատակների, իշխանության ենթարկելու, տեսնում է գյուղերի առաջը խրամատներ, միջին՝ զինված թուրքեր, որոնք արգելում են առաջ շարժվել: Դրանից հետո մնում էր մի միջոց միայն, այն է՝ զենքի ուժով դուրս բերել: Այդպես էլ եղել է, երեկ և այսօր երեք գյուղ թողել փախել են օդի մեջ պայթած ռումբերի հետևանքով: Կարգադրված է նույն ձևով վարվել և մյուս չենթարկվող գյուղերի վերաբերմամբ:

Ներքին գործերի մինիստր - Մի քանի փաստական լրացումներ ունեմ: Օգոստոսին գավառական կոմիսարի օգնականի հետ Նուրի էֆենդին գնացել էր Միլլիդարայի բոլոր գյուղերը՝ խոսելու և համոզելու թուրքերին, որ կամ հպատակվեն, կամ թողնեն հեռանան: Սակայն նրանք չեն կատարել իրենց խոստումը. շարունակում են մնալ և չհպատակվել: Փաստացի կերպով հայտարարում եմ, որ այնտեղ հսկայական չափով ցորեն կա, որ 10.000 փութ ծախել են մեր պարենավորման կոմիտեին, բացի այդ, մեծ քանակությամբ ծախել են և Դամարլվում: Մենք գիտենք, թե որ գյուղերն են վնասված եղել, ուստի և հրամայել եմ, որ վնասված երեք գյուղից ցորեն չպահանջեն՝ եթե տեսնեն, որ հացը պակաս է այդ գյուղերում:

Կարդացվում է խորհրդարանի նախահաշվի մասին օրինագիծը. անցնում են կետ առ կետ ընթերցմանը, ընդունվում է առաջարկություն վեց արձանագրող ունենալու: Օրինագիծը քվեարկվում է ամբողջությամբ և ընդունվում:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 28 նոյեմբերի և 1 դեկտեմբերի 1918թ.